ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N [redacted]

ՀՀ, ք. Երևան, 01 մարտի 2026 թ,

«ՍՔԻԼԼԴ ՔՈՎՈՐՔԻՆԳ» ՍՊԸ-ն, (իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հր. Աճառյան 37/31, պետական ռեգիստրի գրանցման համարը՝ 282.110.1491283, ՀՎՀՀ՝ 01088896), ի դեմս ընկերության տնօրեն՝ Սևակ Ղահրամանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, հետագայում՝ Կատարող, մի կողմից, և

ՀՀ քաղաքացի՝ [redacted], հետագայում՝ Պատվիրատու, մյուս կողմից, միասին անվանվելով՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Կատարողը պարտավորվում է մատուցել Պայմանագրի 1.2. կետով սահմանված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա դիմաց՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

1.2. Պայմանագրով Կատարողը թույլատրում և հնարավորություն է ընձեռում Պատվիրատուին Կատարողի կողմից սահմանված պահանջների պահպանմամբ և Հավելված 1-ում նշված պայմաններով օգտագործել Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ով սահմանված տարածքը (այսուհետ՝ Տարածք), (այսուհետ բոլորը միասին՝ Ծառայություններ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ծառայությունները և վճարել Պայմանագրով սահմանված արժեքը:

1.3. Պայմանագրով սահմանված Ծառայությունը Կատարողի կողմից մատուցվում է Պատվիրատուին՝ ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղամաս 41/7 հասցեում գտնվող տարածքի ֆիքսված աշխատատեղի համար: Ծառայության մատուցման օրերն ու ժամերը սահմանվում են Հավելված 1-ով:

1.4. Յուրաքանչյուր օրացուցային ամսվա ընթացքում մատուցված Ծառայությունը Պատվիրատուին է հանձնվում Կատարողի կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացված համապատասխան հաշվով (այսուհետ՝ Հաշիվ):

1.5. Հաշվի՝ էլեկտրոնային եղանակով ստորագրմամբ, հաշվում նշված Ծառայությունը համարվում է Կատարողի կողմից պատշաճ մատուցված և Պատվիրատուի կողմից ընդունված:

2. Կողմերի պարտականությունները և իրավունքները

2.1. Կատարողը պարտավորվում է՝

2.1.1. Ծառայությունը մատուցել պատշաճ որակով և Պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան:

2.1.2. Պատվիրատուին անհապաղ տեղեկացնել Տարածքի հնարավոր կամ առկա որևէ վտանգի մասին:

2.1.3. չհրապարակել և այլ անձանց չտրամադրել Ծառայության մատուցման ընթացքում իրեն հայտնի դարձած՝ Պատվիրատուի տեղեկությունները՝ առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության կամ օրենք(ներ)ով սահմանված դեպքերում:

2.1.4. Պատվիրատուի պահանջով վերջինիս տրամադրել տեղեկություններ մատուցվող Ծառայության վերաբերյալ:

2.2. Պատվիրատուն պարտավորվում է՝

2.2.1. վճարել Կատարողին պատշաճ մատուցված Ծառայության համար՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

2.2.2. Ծառայության մատուցման համար Կատարողին տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն, ինչպես նաև համապատասխան պայմաններ ստեղծել մատուցվելիք Ծառայությունների համար:

2.2.3. Չվնասել Տարածքը և Տարածքում գտնվող գույքը, օգտագործել դրանք ըստ նշանակության:

2.2.4. Իրեն հանձնվող կամ իր օգտագործման համար անհրաժեշտ գույքն ընդունել և հետ հանձնել համապատասխան հանձնման-ընդունման ակտով:
2.2.5. Կատարողին անհապաղ տեղեկացնել Տարածքին, Կատարողի գույքին սպառնացող վտանգի, հասցված վնասի մասին, ինչպես նաև ձեռնարկել ողջամիտ գործողություններ վտանգի և վնասի կանխման նպատակով:
2.2.6. Ենթարկվել ադմինիստրացիայի պահանջներին:
2.2.7. Հարգել, չխանգարել, չխոչընդոտել այլ հաճախորդների, Կատարողի աշխատակիցների և ներկայացուցիչների գործունեությանը:
2.3. Պայմանագրի ստորագրմամբ Պատվիրատուն հավաստում է, որ ծանոթացել է Տարածքում համակեցության, անվտանգության, սանիտարահիգիենիկ, հակահրդեհային և այլ կանոններին, ինչպես նաև Կատարողի սահմանած կանոններին ու պայմաններին և պարտավորվում է խստորեն հետևել և պահպանել դրանք:
2.4. Կատարողն իրավունք ունի՝
2.4.1. պահանջել Պատվիրատուից ժամանակին վճարել իր կողմից պատշաճ մատուցված Ծառայության դիմաց:
2.4.2. Պատվիրատուից պահանջել իրեն տրամադրել Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տեղեկատվությունը:
2.4.3. Պատվիրատուի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում միակողմանիորեն լուծել Պայմանագիրը և պահանջել Պատվիրատուից հատուցելու իր կրած վնասները:
2.5. Պատվիրատուն իրավունք ունի՝
2.5.1. պահանջել Կատարողից իրեն տրամադրել մատուցվող Ծառայության վերաբերյալ տեղեկատվություն:
2.5.2. Կատարողի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում միակողմանիորեն լուծել Պայմանագիրը և պահանջել Կատարողից հատուցելու իր կրած վնասները:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Ծառայության ամսական արժեքը սահմանվում է Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ով:
3.2. Ամսական վճարն իր մեջ ներառում է տարածքի տրամադրումը, համացանցին հասանելիության, էլեկտրաէներգիայի սնուցմամբ և այլ կոմունալ հարմարությունների, ինչպես նաև այլ անհրաժեշտ տեխնիկական պայմանների ապահովումը:
3.3. Սույն պայմանագրի հավելված մեկով սահմանված գինը պատվիրատուն վճարում է էլեկտրոնային եղանակով հաշվարկային փաստաթղթի ստացումից հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:
3.4. Ծառայությունների հանձնում–ընդունումը կատարվում է յուրաքանչյուր ամսվա ավարտին Պատվիրատուին մատուցված Ծառայությունների վերաբերյալ սույն Պայմանագրի 3.1. կետով սահմանված չափով և կարգով Կատարողի կողմից ներկայացված հաշվարկային փաստաթղթերը Պատվիրատուի կողմից ստորագրելու միջոցով:
3.5. Կատարողի կողմից ներկայացված հաշվարկային փաստաթղթերը Պատվիրատուի կողմից դրանք ստանալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրությամբ չհաստատելու դեպքում Պատվիրատուն պարտավոր է Կատարողին ներկայացնել Ծառայությունները (կամ դրանց մի մասը) չընդունելու վերաբերյալ հիմնավորում (էլեկտրոնային փոստի միջոցով), հակառակ դեպքում մատուցված Ծառայությունները (կամ դրանց մի մասը) կհամարվեն պատշաճ կարգով մատուցված և Պատվիրատուի կողմից ընդունված հաշվարկային փաստաթղթերը վերջինիս կողմից ստանալու օրը:
3.6. Համաձայն սույն Պայմանագրի՝ Պատվիրատուն պարտավոր է յուրաքանչյուր ամսվա համար Ծառայությունների դիմաց կատարել կանխավճար մինչև տվյալ ամսվա 5-րդ աշխատանքային օրը՝ Կատարողի՝ սույն Պայմանագրում նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

4.2. Պարտավորությունը խախտած Կողմը պարտավոր է հատուցել մյուս Կողմին պատճառած վնասները լրիվ ծավալով՝ չհաշված տուժանքը (տույժը):

4.3. Վճարումն ուշացնելու դեպքում, Պատվիրատուն՝ Կատարողի գրավոր պահանջով, վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար Պայմանագրով սահմանված Ծառայության ամսական արժեքի 0.1%-ի չափով, սակայն ոչ ավել, քան Ծառայության ամսական վճարը:

4.4. Ծառայության մատուցման ժամկետը ուշացնելու դեպքում, Կատարողը՝ Պատվիրատուի գրավոր պահանջով, վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար Պայմանագրով սահմանված Ծառայության ամսական արժեքի 0.1%-ի չափով, սակայն ոչ ավել, քան Ծառայության ամսական վճարը:

4.5. Կատարողը պատասխանատվություն չի կրում Տարածքում թողնված Պատվիրատուի և/կամ նրա հյուրերի իրերի պահպանության համար:

4.6. Կատարողը պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի այն վնասների կամ անհանգստության համար, որոնք պատճառվել են Տարածքի կամ հարակից տարածքների վերանորոգման կամ այլ աղմուկի պատճառով:

4.7. Կատարողը պատասխանատվություն չի կրում կոմունալ ծառայությունների ոչ պատշաճ մատուցման համար:

4.8. Ամեն դեպքում Կատարողի առավելագույն պատասխանատվությունը և Պատվիրատուի կրած վնասի փոխհատուցման չափը չի կարող գերազանցել Պատվիրատուի կողմից Կատարողին վճարված մեկ ամսվա վճարի միջին չափը:

4.9. Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պարտավորությունները կատարելու կամ խախտումները վերացնելու պարտավորությունից:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել և կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների որոշումները և նորմատիվ ակտերը, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Պայմանագրով չկարգավորված հարցերը, ինչպես նաև Կողմերի միջև առաջացող վեճերը (դրանց առկայության դեպքում) կարգավորվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով:

6.2. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերի, տարաձայնությունների հետ կապված համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ վեճերը լուծվում են ՀՀ դատական կարգով:

6.3. Պայմանագրի պայմանները կարող են միակողմանի կերպով փոփոխվել Կատարողի կողմից, այդ մասին նախապես 1 ամիս առաջ Պատվիրատուին էլեկտրոնային եղանակով ծանուցելու միջոցով:

6.4. Պայմանագիրը կնքված է համարվում կողմերի ստորագրման պահից, իրավական ուժի մեջ է մտնում **2026թ.-ի մարտի 1**-ից և գործում է անորոշ ժամկետով:

6.5. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին առնվազն 1 (մեկ) ամիս առաջ գրավոր եղանակով ծանուցելով մյուս Կողմին: Պայմանագրի լուծումը Կողմերին չի ազատում Պայմանագրով մինչ այդ ստանձնած պարտավորությունների կատարման պարտավորությունից:

6.6. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

7. Կողմերի իրավաբանական հասցեները և ստորագրությունները

ԿԱՏԱՐՈՂ		ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	
Ընկերության անվանումը՝	«ՍՔԻԼԼԴ ՔՈՎՈՐՔԻՆԳ» ՍՊԸ	ՀՀ քաղաքացի՝	[redacted]
ՀՎՀՀ՝	01088896	ՀԾՀ՝	[redacted]
Հասցե՝	ՀՀ, ք. Երևան, Հր. Աճառյան 37/31	Հասցե՝	[redacted]
Բանկ՝	Հայէկոնոմբանկ ԲԲԸ	Բանկ՝	[redacted]
Հ/հ	163488079688	Հ/հ	[redacted]
Էլ. հասցե՝		Էլ.հասցե՝	
Տնօրեն՝	Սևակ Ղահրամանյան	ՀՀ քաղաքացի՝	[redacted]
Ստորագրություն		Ստորագրություն	

Հավելված 1
[redacted] պայմանագրի

Ծառայության գինը

h/h	Տարածքի հասցեն	Չափի միավոր	Քանակը	Գինը Ներառյալ ԱԱՀ	Գումարը
1	ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղամաս 41/7	Նստատեղ	1	[redacted]	
	ԸՆԴԱՄԵՆԸ			[redacted]	

ԿԱՏԱՐՈՂ՝

ՍՔԻԼԼԴ ՔՈՎՈՐՔԻՆԳ ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հր. Աճառյան 37/31
ՀՎՀՀ՝ 01088896
Հայէկոնոմբանկ ԲԲԸ,
Հայէկոնոմբանկ ԲԲԸ

ՍՊԸ տնօրեն՝
Սևակ Ղահրամանյան

_____
(ստորագրություն)
Կ.Տ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

[redacted]
Հասցե՝ ՀՀ,
[redacted]

ՀՀ քաղաքացի՝
[redacted]

_____
(ստորագրություն)